

ՀԱՅԱԿ

**ԹՈՐՈՍ ԽԵԹՈՒԿԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ԱԲՁՈՒՄԱՆԵԱՆ, ԿԻԿԼՊԵՆԿ
ԲԵՐՍԵՂԵԱՆ (ՀԵՐԵՎԵՆ), ՄԻՀԻՄԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ (ԽՄՆԵՊԸՆԵԱՆ) եի
ՓԱՆՈՍ ԵԱՂՋԻՊԵԱՆ ԵՆԴԵՐՆԵՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈԽԾԿՅՈՒԹԵԱՆ, ԵՇԽԵՓԻՆ ԵՆԹԵՐԻՆԸ
ԶԵՐՀՈՒԹԵԼ ՏԵՆԶԵՆՔՆԵՐԻ, ԵՊԸ ԴԵՎԾՔՆԵՐ ԳԵՏԵՐԸՆՈՎ, ԻԲՐԵՒ ՀԵՅՐԵՆԻՑԻ ԸՉԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐ
ԳՈՐԾՈՂՆԵՐ ԳԵՏԵՊԵՐՏՎԵՅԵՆ ՄԱՀԻԱՆ ՊԱՏԺԻ, ՈՐ ՀԱՍՏԵՏՎԵՑ Ե Ե ՍՈՒԼԹՈՒՆԻ ԿԵՇ-
ՄԻՑ ԵԻ ԳՈՐԾՄԴՐՎԵՅԵՅԻ ԿԱԽԱՂԱՆԻ ՄԻՋԱՅՈՎ ՅՈՒՂԵԱՆ ԵՄՄՈՒՄ: ԿԵՄԵՎԱՆԻ
ՏԵԿ ՀԻՆԴ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՎԵՐՁԻՆ ԵՄՄԵ; ԵՇՎՃԱՆ ԻՐ —
,,ԿԵՑՅԵ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԵՑՅԵ ՅԵՂԱՓՈՒԹԻԹԻՒ!“**

ՍՈՒԼԹԱՆ — ԴԱՀ Խճ.

Հինդ հայ յեղափոխականի սուրբ արիւնով ներ-
կըլեցաւ սուլթանական կախաղանը: Թիւրք բռնակալն
իր՝ արդէն այնքան արիւնով շաղախլված՝ արքայական
ծիրանին բաւական փառաւոր չը համարեց և հայ յե-
ղափոխականներ էլ հանդիսաւոր վատութեամբ սպա-
նելով նրանց արիւնը ևս բայց իր ծիրանին և իր ձա-
կատի վրա: Այդ սուրբ արեան դրօշմ անցնջելի կը
մնայ բռնակալի ձակատին:

Իր անզօր կատաղութեամբ դէպի հայ յեղափո-
խական գործի առաջադիմութիւնը և իր բացայայտ
սարսափով դէպի Հնչակեան կուսակցութեան ընդու-
նած այլ ևս անհերքելի մեծ ծաւալն ու ձգած խոր ար-
մատը հայ ժողովրդի մէջ — սուլթանն այլ ևս կուտում
է մեր դէմ, իբրեւ հաւասարը հաւասարի դէմ: Ար-
դեօք դա բաւական գրաւական չէ մեր զօրութեան և
ապացոյ սուլթանական հեղինակութեան իսպատ վե-
րացման հայ ժողովրդի մէջ: Արդեօք դէպ.քերի չարա-
նենդ հեգնութիւն չէ դա սուլթանի հասցեին, որ նա
ամենայն վայրենութեամբ իր ոյժն է չափում հայ
ուայայի հետ, ագեալուրի հետ, որին մինչ այժմ
գիտէր միայն զնել արհամարհական ձնշման տակ:
Այս, ներկայ դարում ժողովուրդներն են այլ եւս
թագաւոր, իսկ թագաւորներն ըմբոստ ինքնակոչներ,

և հայ ժողովուրդը, միանդամ սկսած սուրբ պատե-
րազմը, ժողովրդի ազատութեան, * բարօրութեան ու
հարստութեան գող սուլթան-դահճի, շղթայի ու
կախաղանի լուծը թօթափելուց յետոյ միայն՝ մի
կողմ կը դնէ իր զէնկը: Մինչ այդ ժամանակ՝ նա կը
լինի պահակ ու մարտնչող իր անձի և իր ազատութեան:

*Քաղաքացիական ներքին պատերազմների բոլոր
միջոցներն էլ գործածում է սուլթանն այժմ մեր դէմ:
Նր բոլոր բռնապետական ծանրութեամբ, ասիական խո-
րամանկութեամբ, լրտեսական ճարպիկութեամբ, ոս-
տիկանական զօրութեամբ՝ զինւորների օգնութեամբ
նա իր փարբաւորներին անդադար յարձակեցնում է հայ
յեղափոխականների վրա, որպէս շները որսի վրա: Եւ
երբ աջողում է մի քանի որս ձեռքը գցել վայրենիի
մարդակիրական հաճյքով հարբեցած, ամենազագեր
և ամենազարհուրելի տանջանքներ և տալիս նրանց
նախապէս և ապա, ամբողջ մարդկութեան շառջեւ,
պաշտօնապէս, օրէնքի անուն տալով, իր գործունէու-
թիւնը պահառում սպանութիւններից ամենաստոր միջո-
ցով — կախաղան բարձրացնելով հայ յեղափոխական-
ներին:

Այս, ներկայ տողերը գրվում են հայ յեղափո-
խական նահատակների, սուլթանի բռնութեան զո-
հերի, ազատութեան անմուանալի մարտնչողների գեռ
տաք արիւնով: բայց այդ արիւնն արդէն ցոյց տվեց
հայութեան զաւակներին ազատութեան ուղին: Այսօր

միլիօնաւոր ժողովուրդն, աչքը յառած սուլթանական կախաղանից կախված իր հինգ անձնուրաց նահատակների անշունչ դիակների վրա, իր դաշոյն է սրում, իր կատաղութիւնն է գրգռում իր դարեւոր թշուառութեան ու անկման հեղինակների դէմ: Այն սուրբ աղաղակը, որ սուլթանը լսեց իր ոսկեզօծ պալատի միջից ու գունատեցաւ, այն հրաշալի աղաղակը — «Կեցցէ Հայաստան, կեցցէ Յեղափոխութիւն», — որ դուռս թռաւ լիւծ թիւրք մարդակերի հինգ սպանածների տանջված կօծքերից նոյն այն րոպեին, երբ գիշ յետոյ սուլթանական թոկը պէտք է խեղդէր նրանց, — այդ աղաղակը բռնակալի ոտքի տակ ճնշված նոյն թշուառ ժողովուրդի աղաղակն է: այդ Ճիչը սուրբ պատերազմի կոչն է, իրաւունքի, արդարութեան ձայնըն է, որ կը համախմբէ հայ ժողովուրդին իր արիւնարբու, գարեւոր գահիների դէմ: Երբէք չի մեռնի մի ժողովուրդ, որ գլխատման բնմից անգամ գիտէ արձակել այդպիսի վսեմ, որոտագին աղաղակ:

Հինգ հոգի կախված... Ուրեմն, պատերազմի բացարձակ յայտարարութիւն: Շամ բարի: Հինգ նահատակների կախվելը չէ, որ մեզ յետ կը կանգնեցնէ մեր ընտրած ուղիից, այլ և ընդհակառակը. դրանով աւելի փառաւոր էջեր ենք գրաւում, մենք, յեղափոխականներս, մեր պատմութեան մէջ և աւելի ենք ոգեւորլում այն սուրբ կայծով որ մեզ զրգեց մղել անհաշտ պատերազմ բռնութեան դէմ՝ աղատութեան համար: Մեր շարքերն այսուհետեւ ոչ միայն չեն տկարանալ այլ և կը զօրանան նորանոր ոյժերով նրանցով ևս, որոնք մինչեւ հիմա վճռականութիւն չունեին թշնամու դէմ կանգնելու, արդարադատ «Եւրոպայից» եւ թիւրքի «Խոհեմութիւնից» սպասելով մի ելք իրանց թշուառութիւնից: Թող մեր գահին իմանայ, որ տասնեակներով բոլգարներ կախելով աւելի շտապեցին դրանց երկրի ազատվելը: Այդ պատմական դասը և մեր անընկճելի եռանդը մեզ համար քաջալեր է, մինչդեռ մեր թշնամուն պէտք է տայ լուրջ մտատանջութեան նիւթ: Ինչ որ էլ լինի, մահը չէ, որ մեզ երկիւղ կը ներշնչ մեր ընկերների քաջարի սրտով կախաղան բարձրանալն ապացոյց է դրան, մեր ամեն տեսակ հալածանքներ յաղթահարելը և այսքան տարւայ յամառ յարատեւութիւնը մեր բռնած յեղափոխական ընթացքնում՝ գրաւական է դրան: Այն թշուառութիւնը, որի մէջ խրված է հաժողովուրդը, միշտ առաջ կը բերէ յեղափոխականներ, որոնք ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ ծնունդ մէկ անտանելի կացութեան, տրտայայտիչ աղատութեան գաղափարի և ձգտող գործադրել այդ մեր կեանքում: Քաջութիւն ուրեմն, հայ ժողովուրդը քո զաւակներդ սուլթանի կախաղանից կանչում են քեզ քո մէջն և քո փրկութեան գաղտնիքն ու զօրութիւնը, որ կիմանայ վերջ տալ ատված ու անիծված բռնութեան: Գնանք շարունակ առաջ առանց յետ նայելու, և գրգոված ու ցաւատանջ

սրտի սիրով խոնարհենք մեր գլուխը սուլթանի կախած հինգ հերոսների դիակների առջեւ, ասելով: — Սուրբ մարդիկ, հետեւող ենք ձեզ բռնութեան շէնքը պէտք է կործանվէ, և արդէն սկսել է կործանվել... և ձեզ հետ միասին աղաղակում ենք — Կեցցէ Հայաստան, կեցցէ Յեղափոխութիւն:

Թ Ա Թ Ա Ց Ա Կ Թ Ի Թ Ի Ն Ե Բ

ՆԵՐԸՆԵՐ ԹԻՒԹՅՈՒՆԻՑԻՑ

ԿԱԽԱՂԱՆ.

Պաղատիա.

Վմեն բան կատարուեցաւ. Պաղատիայ մահուան գատապարտուածներէն հինգ հոգիի վրայ պատիմը գործադրուեցաւ: Հինգ հերոսներն այլ եւս չը կան. կախաղանը խեղդեց նոցա: Այդ հերոսները հայոց յեղափոխական շարժման առաջին նահատակներն են, որ կեանքէ կը զրկուին սուլթանի պաշտօնական ֆերմանով: Սոցա անմուանալի անուննեւն են՝ ՅԱՎՀԱՆՆԻԿԻ ԱՐՁԱԿԱՆԱԿԱՆ, ԹՈՐՈԱՄ ԾԱԽՈՒԿԻԵԱՆ, ՄԻՀՐԻՃԱԾԱՆ ԹՈՒՐՈՍԵԱՆ, ՓԱՆՈՍ ԵՎԱՅԻՊԻԵԱՆ եւ ԿԻԼՊԻԵԱԿ ԲԱՐՍԵՎԱՆ: Երբ որ կը հանեն կախաղան, նոցա քաշուածքը, նոցա դէմքի արտայայտութիւնը ցոյց կուտային հաստատակամութիւն մը, արիութիւն մը որ շատ քիշերը կրնան ունենալ մահուան առջեւ: Նոցա երեսների վրայ ջիզ մը անդամ չը շարժեցաւ, ախրութեան հիտը մը չերեւաց, թէեւ բանտի մէջ թիւրքի սոսկալի տանշանքներէն նիհարցած երեսներ, խոր ինկած աչքեր և չորչարուած դէմքեր ունեին: Զարմանալի գրաւիչ հըպարտութիւն մը կը տիրեր նոցա ամեն մի շարժուածքին մէջ: Պաղ սոսկացնող սարտուռ մը կանցնէր մարդուս ներսը երբ աչքը կը բարձրացնէր հերոսների վրայ եւ կը դիակեր նոցա անխուով դէմքերը, որոց վրայ կարծես կը նկատուէր ոգեւորութիւն մը: Ով գիտէ, թէ ինչ կը մտածէին այդ ժամանակ այդ հինգ անձնուրաց նահատակները, բայց նոցա վերջին ոգեշունչ աղաղակը կը մատնէ իրենց վերջին մտածումը, իրենց վերջին հոգուը. դիւցաղնական կերպով կախաղանի տակ կայնած, երբ չուանը պիտի անցնէին նոցա վկերէն, յանկարծ լսուեցաւ ահաւոր ձայն մը — «Կ Ե Գ Գ Է Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն, Կ Ե Գ Գ Է Յ Ե Ղ Ա Փ Ո Խ Ո ւ Թ Ի ւ Ն... Հ ա ղ ի ւ վ ա յ ր կ ե ա ն ա ն ց ա ւ... նորա այլ ևս կախուած էին... .

Այդ հինգ նահատակներու յեղափոխական գործունէութիւնն ալ նոյնքան օրինակելի է, որքան իրենց քաշարի մահը: Հայրենիքի սէրը, տառապեալ ժողովրեան սէրը, անհուն ատելութիւնը դէպի բանութիւնը միշտ կառաջնորդէին նոցա քայլերը: Այժմ նոցա մահուան ծանըը տպաւրութեան տակ չենք ուղեր երկարել մեր խոսքը, խոստանալով հասցնել ձեզ նոցա կենսագրութիւնները: Կատաղութիւնը և վուժինդիր զգացումը կը կը րակէ հիմա մեր սիրութ: Ժողովուրդը այդ քաջերի մահուան խորունկ տակ կը կախաղակը օրինակին եւ ուխտելով նոցա դիակի հինգ հերոսների օրինակին եւ ուխտելով նոցա դիակ-

ներու եւ նոցա անանուն շիրմիներու վրայ, մենք պիտի
յարատեւենք նոցա գծած ճամնապարհին մէջ, պիտի օդ-
տըւինք ժողովուրդի դրգուեալ զգացումն, նորա ծայ-
րահեղ դ բառհութեանէն եւ վրէժը ու աղատութեան փա-
փագը միախառնելով՝ շարունակ ձգտինք բռնութեան
ոչնչացման... Մենք գիտենք որ միակ արդինաւորն է
նոցա գործը եւ անմահ՝ նոցա յիշատակը, որը գիտեն
մունիլ թորոսեաններու, Արդումանեաններու, Խաղուպ-
եաններու, Բարսեղեաններու, Ծառուկեաններու պաշ-
տելի մահով... .

ԿՈԴԵԿԱՆ

4 Ορθοδοξία 1893.

“**Ճէրիտէի Մէհագիմ**” անուն դատարանական թերթը, որ պարզապէս թիւրք դատարաններու կողմէ արձակուած վճիւներուն չոր արձանագրութիւնը կընէ, անցեալ ամսուոյ վերջերը ընդարձակօրէն սկսաւ հրատարակել իր ամեն մանրամասնութիւններովը վերջերս գաղատից զատարանին առջեւ տեղի ունեցած՝ կեսարիոյ և շրջականներու բաղաբների եւ գիւղերի մէջ ձերբակալուածներու դատաստանը, որ եւ արտապեցին շատ ուրիշ թերթեր, որպէս և “Հայրենիք” և “Արևելք” Բայց ի՞նչպէս կուզէք որ այդ հրատարակութեան մանրամասնութեանց վրայ հաւատ ընծայենք, երբ գիտենք որ թուրքն ամեն ջանք գործ կը գնէ յեղափոխականները ցոյց տալ երկուոտ, թշոյլ, վաս, եւ այդ ընելու համար ամեն տեսակ խօսքեր կը գնէ դատապարտեալներու շրմներու մէջ: Կերեւայ թէ գաղատից դատարանին հարցաբնիչ դատաւորը եւ ընդհանուր դատախազը գիշերը ցերեկին խառնելով, գույլ ու դադարում չունեցող յոդնեցուցիչ աշխատութենէ մը վերջ այդ դրութիւնը փոփոխ են, որուն մէջ ընդարձակօրէն յառաջ բերած են ձերբակալուածներու ըստած “խոստովանութիւնները”, որը հարցաբնիչ դատաւորի ուռած գանկին զառանցանքներ են, այնքան խեղաթիւրուած են, կըսենք, ձերբակալուածներու պատասխանները: Մեր այդ ըստածի բոլոր վկայութիւններու տեղ առ այժմ կը շատանանք՝ առաջ բերելով այդ բանտարկեալներէն շատերու վկայութիւնը, որք իրենց սրտի խօսքէն զայրով կը զգան այդ օրինակ արարիք գէմ:

Բայց ինչ որ ալ ըլլայ, խսկապէս պէտք է որ գետ-
նէն մենցեւ երկինք —թիւրբական ոճով խօսելով — մեր
շնորհակալիքը յայտնենք կառավարութեան, որ բարե-
հաճեցաւ դատավարութիւնը հրատարակել տալ, ամբողջ
հայութեան ու մարդկութեան առջեւ բերելով և զնչա-
կի եւ անոր կուսակցութեան ընդարձակ ճիւղաւարու-
թիւնն, անոր հզօր կազմակերպութիւնը, անոր զօրու-
թիւնը, անոր անկեղծ ու ժրաջան գործունէութիւնը,
որը ինչքան ալ թիւրքն աշխատած ըլլայ նսեմ գոյնով
ցուցնել ընդհակառակը ուրախութիւն, բաջալիքութիւն
եւ հրճուանք կը ներշնչեն համայն հայոց սրտերը։ Այդ
դատավարութիւնը, որ իրապէս ընդարձակ թիւրբական
ամբաստանագիր մ'է և զնչակի եւ զնչակի առ կուսակ-
ցութեան գէմ թէեւ կառավարութիւնը հրատարակած
է թիւրբերը հայերի գէմ գործելու համար կամ այս
վերջիններուն համոզելու թէ ամեն բան ալ լնցաւ, բայց
իրապէս մէծ ծառայութիւն մը մատուցած է գործող
յեղափոխական մարմնոյն եւ մեր ժողովադին առ հասա-

բակ ամեն խաւելը տաք պաշող հայրենասիրական հո-
րը մատներով աւելի խառնշտկեր է։ Իրեն շատ ախորժե-
լի չը պիտի գայ այդ, որովհետեւ իր մատները խաշ-
ուրուտած անկէ պիտի զուրս քաշէ։ Մեր ուղածն ալ
այդ է։

ԱՏՐՃԵՆԱԿ

Կ. Պօլիս, 8 օգոստոս 1893.

Հուլիս 25-ին, կիրակի օրը, Կ. Պոլսու բերին գաղտնից դատարանի դատապարտեալներէն 30 հոգի, բոլորն ալ շղթայակապ: Ասոնց մեջն է Անտոն Ռըշտունի որ գրաւած է ընդհանուրի ուշադրութիւնը և դանի է լ վարդապետ՝ որ չը նայած իր ծանրապէս հիւանդ վիճակին՝ 20-25 հօնանոց շղթան ոտքերէն չեն հանած: Ատոնք բանտարկուած են կենդրոնական բանտը: Քանի մը անգամ Ռշտունին բանտէն 10 զինեալ ժանտարմներով ոստիկանութեան գուռը տարուելով, ոստիկանութեան նախարար Կաղըմ պէ յը նորանոր հարցաքննութիւններու ենթարկեց: Տարօրինակ չէ այս դատավարութենէն առաջ խիստ տանջանքներու տակ քանից հարցաքննած, այնուհետեւ ամբաստանեալները դատած եւ վճռոն արձակած են եւ ատկէ ետքն ալ դարձեալ հարցաքննութեան կենթարկեն:

— Անցեալ շաբթու երկու հոդի փինկեանցի ձերքա-
կալած են, որոնց կամբաստանեն թէ իբր յայտնի ասպա-
տակապետ Գալուստ Արևանեան ի գործակիցներ են:
Առողջ մէկի անունն է Աստուածատուր եւ միւ-
սինը Յարսւթիւն. երկուչն ալ տարիէ մաւելի է
ինչ Պօյիս պանդուխա էին:

— Ո՞աբրի գիւղի քարողիչ Եղիս աս վարդապետն ալ
ձերբակալուած է վերջերս կըսուի թէ Սեբաստիոյ կու-
սակալն ուզած է այս վարդապետ, որ առաջ հոն կը
մնար: Ուրիշ անդամ մ'ալ նորան ձերբակալած եւ շատ
շարչարանաց ենթարկած են:

— Արաբկիրի ստիլան և իւսուսու. Փի սպանման խընդ-
րով դատապարտեալներէ Մըսըրեան Գրի գոր և
Պօյաձեան Պօյաձոս անպարտ արձակուած են. Խալ-
բերդու մէջ ասկէ երկու տարի առաջ ասոնց մահու
վճիռ արձակած էին. բայց Կ. Պօլիս վճռաբեկ ատեա-
նը (Ժէմիզ) բեկանած էր այդ վճիռը և Խարբերդ ալ-
այժմ անպարտութեան որոշում տուած են: Ատոր Հա-
կովակ Հսկայ Գանիէլ Հացագործին տուած մահ-
ուան վճիռը Հացագործին:

— Արդաւլոյծ Մամբը է վարդապետ, որ սապաշխարութեան, Համբար Աշքեանի տնօրինութեամբ Գամակոսի վանքը զգկուած էր, պատրիարքի գործեն քաշուելու լուրերէն օգուտ քաղելով՝ անսպասելի կերպով այստեղ վերադարձած է:

— Երբեմն երուսաղէմ աքսորուած և ի վերջոյ լըտեսութեան պաշտօնով Աղէքսանդրիա եւ անկէց Աթէնք գացող Քէօսէ Արմեն ակ Սարդ գսեանը իր կրօնն ուրանալով, ընդունեց մահմտականութիւնը եւ անուանուեցաւ. Ո՞է չէմ տուր առ փ. այժմ համարձակ լոտե-

սուլթեան պաշտօնը յառաջ կը տանի:

որ զձեղ սիրող եւ համակրող մը ունիք. իւրաքանչյուր հայի սիրող յուզուած է ձեզի դէմ: այլ եւս չէք կարող շաբանակել պաշտօննիդու — այս ըսելով Եսայեան կը մեկնի և մեկ ժամ վերջը Աշոքեան կաճապարէ մատնել զայն կառավարութեան, հաղորդելով նոյնութեամբ Եսայեանի խօսքերը: Հետեւեալ օրը Եսայեան կը հրաւիրուի ոստիկանատուն եւ կը հարցաքննուի: Եսայեան կը պատասխանէ թէ ինքը Անգլիոյ հպատակ լինելուն համար պէտք է զինքը գեսպանատունէն խնդրել: Խընդիրն այդպէս կը մնայ մինչեւ ցարդ:

— (Օդուսոս ամսոյս առաջին շաբթու մէջ դեղագործ կար ապ ետ Պասման եան Եղեռնագատ ատեանի առջեւ գատուելով՝ երեք տարուայ բանտարկութեան վճիռ ստացաւ: Պասմանեանի քոյլէն մետաքսի վրայ բանտուած հայկական զինանշան մը եւ վեսասկար նամակ մը ելած էր եւ ինքն ալ ինչ կերպ մասնակցութիւն ունենալը երկուտութեամբ խոստովանած էր:

— Ինաւորոշ գէպք մը: Ամսոյս նկիզեները երկու պօլսեցի երիտասարդներ շուկայի մէջ իրարու հետ ցածրաձայն խօսած ժամանակ կը ձերբակալեն եւ կը բանտարկեն, կասկածելով թէ յեղափոխականներ են, իբր թէ ասոնք պետեր ոլորել եւ այլ նշաններ ըստ ըստ իրարու: Թիւրքիայի մէջ ուրեմն պետեր ոլորելն ալ յեղափոխական լինելու նշան է. շուտով պիտի ըսեն թէ բթի այս կամ այն ձեւն ալ յեղափոխականի նշան է: Ի՞նչ ըսենք....

— Վանայ կողմերու Գուրուպ աշշի գէպքի քիւրդերէն բոնաբարուած երեք հայ կոյսերն ալ լուր կայ թէ մեռած են:

— Այժմ գատական վճառվ Մշոյ մէջ բանտարկուած է Սարգիս Խար գողեան անունով անձը. անոր վրայ հանած ամբաստանութիւնն է թէ ինքն է եղած Մուսա պէյի նշանաւոր գատն ստեղծողը:

— Արաբկիրցի երեք անձանց վրայ վեսասկար գիրք և Հնչակոյ կարդացած լինելու ամբաստանութիւն ըստ էին: Այդ երեքէն երկուսը Խորէն Հան է սեան եւ Մամաս Գարագար աշտան անձանց անձանց բարդար Սարգիս իման է անձանց առաջնորդ:

ԿԱՑԻՆ

ՆԱՐԻՄԱՆՑԻՆԵՐԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆԸ. *)

Իւշօ գիւղի տէր գաղանաբարոյ Զախալ Շլուս Սալի հաղայի եւ իր մարդերի սպանութեան առիթով հայ գիւղացիներին մեղադրելով, նիխախի զապթիւն՝ հաջի թէյլիք էֆէնդին 20 ժանդարմներով շրջապատեց Անք ի զաս գիւղը, ինքը հաջի էֆէնդին առաջ անցաւ զատիի եւ մի քանի զապթիա երի հետ եւ հիւր եղաւ տէր տէրի տունը: Քահանայ տէր Գրիգորը նրանց տեսնելուն պէս վրա վաղեց եւ ուղումքը ուղարկուած է ճանդարմները վրա են թափառ նընդում գարձնելու: Ժանդարմները վրա են հաջի էֆ. մօտ, եւ ասում 5 տարուան բերդարգելութեան գատապարուած է:

Հարուած իջեցրեց քահանայի գլխին. քահանան մի ուրախ բնաւորութեան տէր մարդ եր և առաջին հարուածին կարծեց թէ հաջի էֆ. հանար է անում, ուստի ծիծաղելով ասուց, թէ վայր իջիր և յետոյ կարող ես գործի սկսել: Քայլ երբ տեսաւ որ հաջի էֆ. շարուած է գործը՝ այն ժամանակ զայրացած հարցրեց մինչու ես ծեծում ինձ:

“Երա համար եմ ծեծում քեզ այ շուն, որ դու այստեղ աւազակներ ես պահում եւ սպանութիւններ անել տալիս ասաց հաջի էֆ. կատաղած: Քահանան ոշինչ ըս խօսեց, ետ թուաւ կանգնած տեղից, որ նորից չենթարկվէ ծեծի: Հաջի էֆ. ձիուց վայր իջաւ, ոյնպէս շատիին: Կրամաց համար տեղ պատրաստեցին սենեակում եւ կերակրի պատրաստութիւն տեսան. զրին սենեակի մէջտեղ ցած կլոր սեղանը, վրան շարեցին կերակութերը, հիւրերը սկսեցին ուտել: Քահանան նրանց լաւ կերակրելու համար պատրաստել էր մի խորոված գառը, որը վերջացնելուց յետոյ հաջի էֆ. մեզ պահանջեց: Կրամար պահաջը կատարելու համար տէր Գրիգորը ստիպված էր մի փեթակ բանալ — տանը մեզը ըս կար, սեղանի վրայ գրվեց նոյնպէս մեզը: Աւտեղուց, լուացվելուց յետոյ նոր սկսեց գործի: Հաջին տէր Գրիգորից հարցրեց թէ ուր են գիւղացիները. իմանալով որ գիւղումն են, կրկին հարցրեց. ինչ են շնում. պառասխան՝ կալ են կալում: Այդ ժամանակ գեղի գղերը կանգնան էր նրանց մօտ. գիմելով նրան հրամայեց կանչել: Կամ մի թուղթ հանեց գրպանից ու սկսեց բարձը կարգալ. — Անք բանի բոպէից զիսեանց շայրապետ քեչեամին, նրա եղքոր վետա գոգոին, Օվաննեց Մինասին, ջանալինց Գրիգորին, Ղալայջի Էդուարտին, Երևանասին, Ջանալինց Գրիգորին, Ղալայջի Էդուարտինց Մանուկին: Մի բանի բոպէից հաւաքեցին բոլորին: Այդ ժամանակ հրամայված էր գիւղը շրջապատող ժանդարմներին ոչ որին ըս թողնել գիւղ ներս մանելու: Ագրակեցի խուլ Փէրմանը մի թիւ մեղեայ աման ձեռքը գալիս էր գուղից ապօնք առնելու, ժանդարմները հրամայում են նրան կանգնել. Փէրմանը շարունակում է ճանդարմները առանց ուշադրութիւն գարձնելու: Ժանդարմները վրա են թափառ մօտ, եւ ասում այս մարդը գիւղ էր մտնում, մի քանի անգամ գգուշացրին, ականջ ըս դրեց. ստիպված էինք բռնել բերելու: Հաջի էֆ գովեց նրանց քաջութիւնը և հրամայեց միւս 9 հոգու հետ գուրս հանել գիւղից գէպի Ագրակ: Գիւղացիները նոր հասկացան, որ իրանք կորան: Այդ լուրը մի բոպէում տարածվեց գիւղում և սկսվեց կանանց ու տղայց այնպիսի լաց ու կոծ, երբ այդ տասը հօգին գուրս էին գալիս գիւղից՝ շրջապատված 30 ժանդարմներով, որ կարծես գնում էին կախալան. կանանց լացն ու կոծը սիրտ կտրող էր: Արանք լալիս էին հասկանալով, որ միանդամ տաճկաց ձեռքը ընկնելուց յետոյ՝ ել աղատվելու յաց շկար. ինչ պիտի արած, հետագանդեցին առանց տրտունքի. Խալ գիւղմանը մինչեւ գիւղից գուրս գալը, չէր հայկացած՝ թէ ուր են տանում իրան: Նա խուլ էր եւ ոչինչ իմացած չէր. գիւղացիր էլ նրա հարցին ըս պատասխանցին:

“Եսնպէս վարվեցան եւ Ագրակում. մի բանիսին ծեծելուց, մի քանիսին հայհոյելուց, փորերը լաւ կշտա-

*) Տես «Հնչակ», 1892 թ. № 12, նամակ կարկինից:

յընելուց յետոյ հրամայեց հաջի էֆ. կանչել զուռնա-
չի դասեիթին, գալուլչի Մկրտիչին, Առաքելենց Համ-
պարին, Պեմբրլի Մարտիրոսին, Գեմիրլի Առապետին և
ուրիշ երեք հոգու:

Հաւաքելով բոլորին՝ շըջապատեցին նրանց ժայդարմ-
ներով և գուրս եկան գիւղից գետի ՞և ի և ա և:

Հերեւելով վաղուց անցած էր եւ արեւը մայր մտնելու վրայ էր, երբ դուրս հանեցին գիւղղից այդ խեղձերին: Մեկնելու ժամանակ արդիեցին բանտարկեալներին ճանապարհի պաշար վերցնել ասելով, որ առաջին գիւղումը կարելի է առնել: Երեկոյեան հասան Պաշար այս տաճկաց գիւղը եւ փակեցին այդ բանտարկեալներին մի գոմում: Գիշերը բաւականին անցած էր, բայց նրանց մօտ եկող չը կար:

Բանտամնկեւալները քաղցած էին, շատերը նրանից
ոչինչ չէին կերած այդ օրը. ստիպված էին ձայն տալ
զապթիաներին: Եկաւ զապթիաներից մինը՝ Օման չա-
վուշը, եւ սովորական հայհոյութեաներից յետոյ, որ ի-
րան անհանգստացրին, ասաց՝ հաջի էֆ. արդիլած է ձեզ
հաց տալ ու հեռացաւ: Այսպիսով այդ գիշերը բան-
տարկեալները մնացին քաղցած: Աւատօտեան արեւը ծա-
գելուց յետոյ հրամայեցին ճանապարհ ընկնել: Գուրս
եկան եւ շարվեցին դուան մօտ: Գիւղի փորբիկ տղայըը
որ պատրաստ կանգնած էին այդտեղ սկսեցին քարեր
գցել բանտարկեալների վրայ, զապթիէները քիչ հեռա-
անցան՝ որ բարերը իրանց ըլ գպչեն, հանդարտ կերպով
մոիկ էին տալիս եւ մոքերով անդամ չէր անցնում
արգիւլ տղայոց: Ո՞վ է իմանում դուցէ իրանը եին
պատրաստաց այդ բանը: Բանտարկեալները լաւ քար-
կոծվելուց վերջը ստիպվեցան խմբով գիմել հաջի էֆ
բնակարանը՝ գանդատվելու: Զապթիաները արդիլեցին
նրանց տեղից շարժվելու, իսկ տղայոց հրամայեցին ցըս-
ւել Մինչեւ տղայոց ցրուելը հաջի էֆ. Էլ տնից դուրս
եկաւ եւ հրամայեց առաջ գնալ: Քաղցած, ջարդված
ճանապարհ ընկան խեղճերը: Ճանապարհին որոնք ետ
էին մնում կամ թուլանում քաղցից, զապթիաների մլտ-
րակները եւ հրացանների կոթերը ստիպում էին նրանց
առաջ գնալ իսկ եթէ իրանք զապթիաները յոգնում
էին, թուզում էին բանտարկեալների շալակները եւ սրանք
անտրտունչ տանում էին այդ վատ բեռները: Վերջապէս
եղեկոյեան հասան Նիլսախ:

Նրբ զապթիաներից մինը առաջ անցաւ եւ լուր
բերեց բանտապետ Ռաձապ չավուշին՝ որ Նարմանի ա-
ւազակներին ձերբակալեցին եւ շուտով նիստակ հանե-
լու են, այն ժամանակ նա պատրաստվեց նրանց լաւ
կերպով ընդունելու. առաւ ձեռքը հատ մահակ եւ
կանգնեց բանտի փոքրիկ դրան մօտ, որից բանտարկ-
եալը կզկած ներս էր մտնելու. բերին թշւառներին;
Բանտարկեալներից մինը որ ծանօթ էր բանտի դիրքին
(եղած էր այդտեղ հարկերի պատճառով), երբ ծովեց
որ ներս մոնէ, Ռաձապ չաւուշի աշագին մահակը ի-
ջաւ նրա մէջքին. մինչեւ բանտարկեալն ուշքի եկաւ
եւ ներս մտաւ Ռաձապ չավուշի մահակն էլի մի-
քանի անգամ իր գործը կատարեց:

Այսպէս վարվեց Արածագ շավուշը մնացեալիների հետ էլ միայն զանազանութիւնը նրանումն էր, որ վերջինները օգտագործ առաջինների օրինակից, աշխատում էին որ-

քան կարելի է ըստ անցնել գումար մինեւ չեւ թա-
ճսպ շալուշը մի հարուածից յետոյ պսորաստվում էր
երկորդը վրա բերել գիւղացին արդէն անցած էր լի-
նում շշմբը: Երբ Ռամազ շալուշը աւարտեց իր գործը
եւ բոլոր նարիմանցիները բանուումն էին, հրամայեց հա-
ւաքել բոլոր բանտարկեալներից իրանց մօտ գտնված
հացերը, որ նորեկներին չը տան: Բանտը նեղ էր եւ դայ
նորեկներից մօտ 10 հոգուն տեղ չը կար պատկելու, բայց
ինչ արած, պէտք էր տեղաւորվել տաճկի ինչ գործն է,
թէ հայր բանտի մեջ ինչպէս է անցկացնում գիշերը:

Բանալը մի քառակուսի փոքրիկ սենեակ էր. Յ սահեն
երկարութեալք և մօտ 5 արշին լցոնութեամբ: Արեւել-
եան պատը գտնվում էր հողի մէջ, իսկ երեք կողմից
շնութիւններով էր շրջապատված: Լյոյ առնում էր եր-
դիկից: Սենեակի մէկ անկիւնում մի փոքրիկ փոս էր փոր-
ված, որտեղ մահեառ ուկանները լուացվելու արարողու-
թիւնն էին կատարում օրը 5 անդամ նամակից առաջ:
Ֆի կերպ բանտարկեալները տեղաւորվեցին յատակի վր-
ուայ: Առաջին գեշերն էլ սովոր անցկացրին. հետեօնին
հայ չունեին, հայ տուող էլ չը կար

Պիւս օրն առաւտուեան եկաւ Ռամազ չափուշը եւ
հրամայեց զապթիանեթին թոյլ տալ հաց ուտելու բան-
տարկեալնեղին: Բերին հացթուլից հաց եւ գիւղացի-
ները սովոր դայլերի նման վրա թափլեցան եւ սկսեցին
ուտել: Եթբ հացը կերան վերջացրին, եկաւ հայթուլիը
և փող պահանջեց 20 զր., մօտ 2 ս. գիւղացիները փող
չունեին եւ ինդրեցին սպասել մինչեւ գիւղից ստա-
նան: Յանկած ներս եկաւ ձիւսապ չափուշը եւ կոն-
չեց ագրակեցի Մարտիրոսին ըննութեան: Մարտիրոսը մի
առոյգ երիտասարդ, գուրս եկաւ բանտից, երկու զապ-
թիա բռնած նրա թեւեթից՝ տարան քննիչն մօտ: Անցաւ
կէս ժամ բանտարկեալներից իւրաքանչիւրը մեծ անհամ-
բերութեամբ սպասում էր իր հերթին... Յանկած կ'լըն
սենեակից լսվեցան խառնաշփոթ ձայներ. պարզ երեւում
էր որ մէկին ծեծում են. մօտ 10 սոպէ հասնում էին
ձայները, յետոյ միայն լսվեցաւ մինի տնբալը. . .
Այդ ծեծողները, տնբոց ու ձայները գաղացելուց յե-
տոյ գուրս կանչեցին ագրակցի կարապետին քննու-
թեան: Կարապետը գուրս եկաւ. . . նորից լսվեցան խառ-
նաշփոթ ձայներ. . . կարապետից յետոյ կանչեցին Սաքօ-
քեհեամին: Սաքօ քեհեան 80 տ. մի կայտառ ծերունի էր.
Նրա ուրախ ու անվախ բնաւորութեան համար տաճիկնե-
րը կոչում էին «գելի Սաքօ» (գել Սաքօ). Եւ նա պարծե-
նում էր դրանով: Անցաւ մօտ մի ժամ, ոչ մի ձայն չե-
լսվում. Ռամազ չափուշը ներս մտաւ եւ շղթայ ամբա-
ցնելու սալը զարկեց գետին ու պարասատեց մի Փէյ-
զուլլա փողաշղթայ: Այդ շղթան մի ծայրում ունէ մի
մեծ կամարաձեւ երկաթ, որը շաշժական փեղկով սեղ-
մում է. կամանը անցկացնում են սուբին, փեղկը իւր տե-
ղըն են անցկացնում. շղթայի միւս ծայրին ոչինչ չը
կայ. հանդիսառ քալելու համար շղթայակապը ստիպված
է առնել ուսին եւ այդպիսով միայն կարող է քայլել
այն էլ մեծ գժուաբութեամբ: Շղթայի երկարութիւնը ու-
սոշ յայտնի չէ. կամ շղթաներ որ 2 մետր 1 սահեն կամ
աւելի երկարութիւն ունեն. ամենամեծներ շղթայի ծան-
սութիւնն 15 ֆունտ է, 11 լիքր:

Երս բերին Սաքօ աղաին, ոտքը շլթայեցին, թա-

թին բանտի դուռը. երբ Սաքօ աղան կուացաւ ներս մտնելու՝ Ուաճապ չավուշը մի աքացի հասցրեց եւ մեր գելի Սաքօն ներս ընկաւ բանտ քիթն ու բերանը արիւնաշաղախ:

Պատրս կանչեցին գելի Սաքօի որդի Զաքարին. Նը-ռան էլ շլթայեցին եւ բերին հօր մօտ: Քննութիւնը տեւեց երկու օր. շլթաների ձայնը խառնվում էր ծեծ-վողների լացի եւ տաճկաց գաղանային հրձուանքի հետ:

Վննվածներից մի քանիսին ծեծեցին, մի քանիսին շլթայեցին, մի քանիսին էլ ծեծելուց յետոյ կապեցին ա-լսուատան սիւներին, որտեղ մնալու էին առանց հացի. այդ վերջինների թւումն էր եւ խուլ ֆերմանը: Այդ խեղճին քննութեան ժամանակ երբ մի քանի հարցեր են առաջարկում եւ նա իր խութեան պատճառով չէ լը-սում, սարսափելի կերպով ծեծում են եւ համայում են կապված թողնել 2 օր. թշուառը լաց էր լինում եւ պահպանից հարցնում իրան բանտարկելու եւ ծեծի պատճառը: Վերջապէս աւարտվեց բննութիւնը, քակեցին կապվածների կապերը եւ շլթայած գեցեցին միւնների մէջ: Այդ խեղճերի մարմինների վրա բացի փայտի հետքե-ռից, որով ծեծած էին, երեւում էր նոյնպէս հետքեր գաղա-նային բարդարութեան: Անելիքը (մաշա) տաքցրած կրակի վրայ մօտեցրած էին այդ թշուառների ձեռ-քերին, քթերին, ակսնջներին եւ կող բերին: Երկար կապ-ված մնալուց յետոյ ձեռներն ու ոսները կաթես գո-սացել էին եւ հազիւ կարողանում էին շարժել ընկեր-ները անդ տվին տանջվածներին պառկելու եւ իրանք քաշվեցան մի կողմ. որոնք կարող էին՝ կարեկցարար մօ-տենում էին նրանց եւ հոգատարութիւն անում:

Երկար կը լինէր եթէ մանրամասն գոելու լինէինք քննութիւնը գլխաւոր հարցն այն էր՝ որ իբր թէ այդ գիւղացիներն են կերակրել այն աւազակների խմբին, որ սպանեց Սալիհ աղային եւ ընկերներին և որ կտրեց թոր-թումի ճանապարհը եւ կողոպտեց մօտ 20 տաճիկների: Բանտարկեալները պատասխանած են, որ իրանք ամե-նեւին տեղեկութիւն չունեն այդ գործերից: Այդ խոս-քերի հետեւանքն էին այն տանջանքները:

(Կը շարունակվէ)

ԱԿԱՆԱՏԱ. Ա.

Մ Ա Տ Ե Կ Ա Գ Ր Ա Բ Թ Ի Ւ Ե

Թ Ա Փ Ե Յ Է Լ Պ Ե Տ Կ Ա Ն Ե Յ Ե Յ Ն

ԴԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

(Շարունակութիւն N^r 5-ից)

Խնչպէս բուրժուազի պատմական յաղթանակը կա-տարվեց մէկ ահաւոր թնդիւնով, անհամբերութեամբ ու հանճարեղ հարուածով—քրանսիական լրեծ Յեղա-փոխութեամբ — և աւատական կարգերի վերջնական ան-կումը եղաւ դրա հետեւանը, մի սոսկալի անկում, որ ասես պայթեց մի հսկայական վառօդարան, տակն ու վրա անելով իր ողջ շրջակայքն ահագին տարածու-թեամբ, — ումանտիսմը գրականութեան մէջ, ծագելով այդ ժամանակները բուրժուազիայի հետ, նոյնպիսի թըն-դիւնով, անհամբերութեամբ ու հանճարեղ հարուածով

շտապեց կործանել գրականութեան կեղծ, կլասիկական ուղղութիւնը, որը ծնունդ էր առել աւատական կար-գերի տիրապետութեան միջոցին: Խնչպէս բուրժուազի-ան աւետում էր նոր գարագլուխ մարդկութեան կեան-քում, նոյնպէս ումանտիսմն աւետում էր գրականու-թեան նոր գարագլուխ: Խնչպէս բուրժուազիան անո-ղոք հարուած հարուածի վրա էր տալիս աւատական կարգերի հասարակական, բազաքարտական ու մասնաւոր բոլոր պայմաններին և անսովոր եւ անսովոր տիրապետութեամբ շտապում էր իր գասակար-գային տիրապետութեան լուծը գնել մարդկային կեան-քի բոլոր ճիւղերի վրա, — նոյնպէս ումանտիսմը գրա-կանութեան մէջ միանդամից լնդ միշտ հրաժարվում էր կեղծ-կլասիկական բոլոր աւանդութիւններից և ինքնա-գստահ կերպով տիրանում գրականութեան բոլոր ճիւ-ղերին: Յաղթանակող ու տիրել սկսող բուրժուազիային համապատասխանում էր ումանտիսմն իր յաղթական սկզբնաւորութեամբ գրականութեան մէջ: Բուրժուազիայի յաղթական սկզբնաւորութեամբ գրականութեան բուրժուազիայի յաղթութեան ժամանակի ոգեւորութիւնը, յափշտա-կութիւնը, երազները, յշսերը, ձգտումները, իշերեն ի- րանց գրաւիչ կախարդող ոգեվորել էին գրական ումանտիսմը: Բուրժուազիայի յաղթանակով ծագում էր աղդութիւնն իր նոր հասկացողութեամբ, և ումանտիսմն այդ աղդութիւնը երգում էր, իդէալ էր նրան գարձնում և նրա մասին ճառում: Բուրժուազիան գուրս գալով միշ-նադարեան անշարժութիւնից ու խաւարից և բերելով մարդկութիւնը երգում էր, իդէալ էր նրան գարձնում և նրա մասին ճառում: Բուրժուազիան հայեացքները, մի միտք՝ բա-ւական աղատված հնաւանդ սովորութիւնների, նախապա-շարումների կաշկանդներից, մի կեանք՝ հիմնված հնից խիստ տարբեր պայմանների վրա և կիսութիւններ՝ կամ վերանորոգված և կամ նոյն իսկ իր հետ ծագած, — այդ բոլորն էլ լինելով արդիւնք նրա տնտեսական-հասարակական պահանջների, — բուրժուազիան, ասում ենք, նոյն հայեացքներով նոյն մաքով տոգորեց գրական ումանտիսմը, որն այդպիսով կարծես, արեւի նման ծա-գում էր միշնադարեան խորունկ գիշերից յետոյ: Ամեն բան ահաւոր, հսկայական, կենդանի, բուռն, լայնածա-ւալ յաւակնոտ, ցուցամոլական, երբեմն շինծու, ստէպ ձեւական էր բուրժուազիայի մէջ իր յաղթական սկզբ-նաւորութեան ժամանակի — մարդկեկը՝ նրա Յեղափոխու-թեան հերոսները, գեաքերը, գործերը, մտքերը, կրթե-րը, բոլորն իրանց բազմատեսակ արտայայտութիւններում: այդ բոլորն էլ նոյնութեամբ արտայայտվեցան գրական ումանտիսմի մէջ: Ումանտիսմը գրականութեան մէջ գա-— բուրժուազիայի տիրապետութեան սկզբի ժամանակի ծագումն է, զաւակն է, որ ուզում էր տիրող լինել ա-մեն բանի գրականութեան մէջ, որպէս ինքը բուրժուա-զան սկսել էր տիրող լինել ամեն բանի կեանքի մէջ:

Բայց այդ ամբողջ մեծութիւնը պէս պէս է յանդէր ըստով մի ողպամելի վախճանի: Բուրժուազիայի տիրա-պետութեան առաջին երկու երեք տասնեակ տարւայ հետ անցաւ նաև նրա ոգեւորութիւնը, նրա անզուսպ եռանդը, նրա ամեն բան վերանորոգելու տեհնը: Դրա հետ միասին գրական ումանտիսմի էլ սկսում է կամաց-կամաց կորցնել իր նախկին փայլը, իր նախկին յափլշ-տակող ողին, տաք շունչը: Գրական ումանտիսմի կեան-

քըն իսկապէս կարճատեւ եղաւ, ուպէս կարճատեւ էր բուրժուազիայի տիրապետութեան սկզբնաւորութեան փայլը, որին յետոյ յաջրդեց մէկ ընդհանուր հիասըթափում, որից յետոյ մնացին լոկ խաբված յցաւերի բեկորներ. յաղթութեան հարբեցած տրամադրութիւնը փոխվել ու անցել էր, ինչպէս անցնում է գինու շոգի աղբեցութիւնը. Յեղափոխութեան իսկական զինուորը, ընդհանութիւնը, զայթնեց և տեսաւ իրան մերկ, անօթի և գարձած նոր տեսակ գերի: Ուռւոյի, Վօլտերի, Կոնդորուէի և գրանց աշակերտների — Մեծ Յեղափոխութեան հերոսների — բարձր, մարդաբարձրական գաղափարները մարմարվ կեանքում, յանդան մի քստմելի իրականութեան, ծնունդ տվին մի խորին անհաւասարութեան, մի կատաղի շահագործութեան ուժեղի կողմից տկարին, դըրամատիրական առանձնաշնորհումների դառն անարդարութեան մարդկային բաղաբակրթված հասարակութեան մէջ: Կենսական հօրիզոնում արդէն սկսել էին նշանակվել 1830 և 1848 թթ. ժողովադային յեղափոխութիւնների նախագուշակ նշանները: Բուրժուազիան դառնալով տիրապետող դասակարգ, ծնունդ էր տվել մէկ ուրիշ — ըրբորդ — դասակարգի գոյութեան, այսինքն ամեն սեփականութիւնից զուրկ և միայն իր աշխատութեամբ ապրուստը հայթայթող դասակարգին, պրոլետարիատին: Ժողովուրդն այլ ևս գուրս էր եկել պատմական անյատութիւնից, անցել էր պատմական բեմի վրա բուրժուազիայի հետ, որպէս այս վերջինի գոյութեան ու տիրապետութեան մէկ անհրաժեշտ պայման ու միջոց — բանող ձեռք, Փիղիքական բանող ոյժ, մի գերի, որ էապէս Մեծ Յեղափոխութեան մէջ իսկական կռւողն ու բուժուազիայի համար յաղթանակ տանողն էր: Այդ աշխատաւոր ժողովուրդը կարծ ժամանակի ընթացքում ստացաւ աւելի կարեւոր նշանակութիւն, քան ուներ Մեծ Յեղափոխութիւնից առաջ և բուրժուազիայի տիրապետութեան սկիզբների միջցին: Գրեմօկրատական, ռածկավարական տարրն եւս երեւան էր եկել: Դրա շընորհով եւ զրա հետ միասին բուրժուազիան հասարակական նոր կարգերը տվել էին կեանքին, աւելի դիմոկրատական գոյն, հասարակական ու բաղաբական կեանքում սկսել էր մասնակցել կամ աչքի ընկնել աւելի մէծ թիւ բազմութիւն՝ դուրս եկած հասարակութեան ամեն խաւերից: Գրականութիւն, մամուլ թատրոն, հասարակային զուարձութիւններ, զբոսանքներ այլ եւս դադարել էին ամփոփված մնալ մէկ առանձնաշնորհված, ազնւական դասակարգի սահմանափակ շըջանում, ինչպէս էին աւատական կարգերի միջոցին, և մատչելի էին դարձել հասարակութեան շատ աւելի մէծ և նրա զանազան խաւերին պատկանող մի բազմութեան: Կեանքի այդ աւելի ու աւելի գեմօկրատական գոյն ու ընթացք ստանալը հանդիսանում է այն աղբերը, որից ծագում է գրականութեան մէջ մի նոր ուղղութիւն, հակառակ ու մանտիսմի, ինչպէս այս վերջինս հակառակ էր կեղծկանից: Գրական այդ նոր ուղղութիւնը ը է աւագանք (իրական), որ ներկայ դարուս առաջին կեսում ունեցաւ իր երեք հանձարեղ հիմնագիրները, երեքն էլ երեւան եկած միաժամանակ, միմեանցից անեակ ու ինքնորոյն, մի կէտ՝ ապացուցանողը որ այդ կանազան երկրների երեք հանձարին ծնունդ են տվել

պատմական կեանքի նոր, միանման հանգամանքներն ու ձգտութիւնը: Այդ երեք հանձարներն են ֆրանսիացի Հօնորէ գլուխացի, անդլիացի Շարլ Գիկէնս — Արեւմուտում և Նիկոլայ Գոդու — Ռուսասառանում:

Այդպէս է եղել գրական ուժանտիսմի և բէալիսմի պատմական ծագումը, այդ իւրաքանչիւրն էլ ունենալով իր մէջ մի քանի ստորաբաժանումներ: Ինչպէս ամեն-մի երեւոյթ կեանքում, նցյալի գրականութիւնն ու դրա զանազան ուղղութիւնների ծագումը պէտք չէ ինտոնել առանձին հանձարեղ անհաների մաքում, այլ կեանքի հասարակական-տնտեսական պայմաններում, որոնց ենթակայ է և որոնցից ծնուդ է առել նցյն ինքը հանձար անհատը: Մարդս արդիւնք է մի կողմից բնական և միւս կողմից արտեստական միջավայրի: Բնականն է բնութեան, աշխարհագրական միջավայրը, որ գործն է մարդկային ձեռքի: Ինչպէս բաղաբացիական ու բաղաբական երեւոյթները, հաստատութիւնները, ինչպէս փիլիսոփայութիւնները, գեղարուեսաններն ու կրօններն՝ իրանց ծագումով ու վախճանով նցյալի զրականութիւնը արգասիք է, արդիւնք է տնտեսական միջավայրի, դա է նրան ծնունդ տվող հողը: Այդ միջավայրը քննելով է, ուրեմն, որ պէտք է բացատրենք մարդկային կեանքի բոլոր երեւոյթները, ինչպէս և գրականութիւններով:

(Կը շարունակվէ)

ԱԿՆ-ԵԱՆՑ.

ԿՈՒԻ ՄԱՐԶՈՒԱՆԻ ՄԵԶ.

Մարզուանից մեզ հաղորդում են հետեւեալը. Այսուհետեւ ամսուան վերջին օրերը տեղւոյս ստորականութիւնը ստուար բազմութեամբ կը պաշարէ տուն մը, ուր կը գտնուէին երեք հայ, որոց մասին կառավարութիւնը կը կասկածէ թէ յեղափոխական ասպատակներ են: Տունը պաշարելով կուզէ ձերբակալել հայերը, բայց ասոնք հրացանի եւ ըեզօլիքի գնդակներով կը պատասխանեն: Տեղի կունենայ կոիւ մը. տեղւոյս միւլա զը մոստ ի ի կ ա ն ա պ ե տ ը եւ զդրերի հարիւր ապ եւ ը վիրաւորուած կիյնան: Երեք հայերէն ոչ մէկը գնդակի հարուած կը ստանայ, բայց զօրքերը կը յաջողին ձերբակալել անոցմէ երկուքը՝ Վարդեր գուշակ էին, իսկ հայերը մօտ 500: Կոիւր պատահած է յունիս 14-ին. եղած է շատ արիւնահեղ եւ տեւած

“Տեղս ձերբակալութիւնք շատացեր են:”

ՄԵԶ ԿՈՒԻ ՍԱՍՆՈՅ ՄԵԶ.

Խարբ երդից յունիս 29-ին մել հաղորդում են հետեւեալը: —

“Տեղս լուր հասաւ, թէ իրը Սասոնոյ կողմերը տեղի է ունեցած մէծ կոիւր մը հայերու եւ համբաւիւն զօրքերու մէջ: Այս վերջինք թւով քանի մը հազար էին, իսկ հայերը մօտ 500: Կոիւր պատահած է յունիս 14-ին. եղած է շատ արիւնահեղ եւ տեւած

ամբողջ ժամանակ սպաննուած են, կը-
սեն, 50-60 հոգի, իսկ զօրքերէն 200, էն աւելի: Առ-
ւի գաշտէն խցս տալով՝ զօրքերը յարձակած են զիւ-
զերու վրայ եւ հարիւրէն աւելի աղջիկներ ու երե-
խաներ մորթելով գետը թափած են:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒԹՔԻՑՅԻՑ.

Ա. Պօլսից օգոստոս 20-ից մեզ գրում են.—

* * * «Տեղս կենդրոնական բանտի մէջ մեռաւ
գաղատից դատապարտեալներէ կառապան Յովհան Էնց ան-
նէ ու ը, որ կեսարից բանտին մէջ կրած սոսկալի տան-
ջանքներու հետեւանքէն արգէն ծանրապէս հիւանդա-
ցած էր: Դարձեալ մի նահատակ:»

«Տեղւցս կենդրոն, բանտն այժմ այցելել չեն թո-
ղուր, ժողովրդեան մէջ տարածայնութիւն կայ թէ կաս-
կածելի հիւանդութիւն մը կը տիրէ այնտեղ:»

* * * Արաբկիրից մեզ գրում են.—

«Այսեղեն է ժարենց զաղար եւ իր
կինը Տէր սի մի կողմերը եւ ի ճայ անուն գիւղը
գնացած լինելով հանքային ջրերու համար, հոն կը
ձերբակալուին իբր կասկածաւորներ եւ այնքան կը ծե-
ծ են անոնց որ կինը ճամբան կը մեռնի, իսկ էրիկը
սաստիկ հիւանդ կը բերեն հոս եւ բանտը կը նետեն:»

ՅՈՒՄ 15-Ի ԵՐՐՈՐԴ ՏԵՐԵԳՐՅԱՅ.

Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքից մեզ գրում են հե-
տեւեալը.—

«Հնչակեան կուսակցութեան քաղաքիս Մասնաճիւ-
ղըն այս տարի հանդիսաւոր կերպով տօնեց Յուլիս 15-
ի մեծ 8ոյցի երրորդ արքեարձը: Քաղաքիս զրեթէ
բոլոր հնչակեանները լինելով բանւոր գասէն, տօնը
տեղի ունեցաւ ըստ եւրոպակոն յուլիս 29 շարաթ
երեկոյ:

«Մեծ սրահ մը վարձուեցաւ որ զարդարուած էր
ազգային եւ կարմիր գրօշակներով: Ասոնց վրայ կախ-
ուած էին օրուան երեք հերոսների մեծագիր պատկեր-
ները, Յ. Պումրուեանի, Մանուկ Նալպանտեանի եւ Յ.
Զանկիւլեանի, ըստ որում այս վերջ նա, զարդարուած
կարմիր ծաղիկներով իւղաներկ էր, որ գործն է մի
հայրենասէր նկարչի եւ նուեր Մասնաճիւղին: Կարմիր
գրօշակներէն մէկի վրայ ոսկեղօծ տառերով գրուած
էր. «Ջաւառութիւն, Եղբայրութիւն, Հաւասարութիւն:
Ամեն բան ժողովրդի համար և ժողովրդով ո, որ ամենուն
ուշադրութիւնը գրաւած էր: Հարիւրէ աւելի հնչակ-
եաններ մասնակցեցան հանդիսաւոր թափորին, որ, ե-
րաժշտութիւնը իր առջեւեն, կանցնէր քաղաքիս նշա-
նաւոր փողոցներով ուր կը խոներ ամերիկացի ամբո-
ւու եւ պատուհաններէն ալ թաշկինակներ կը շարժէ-
ին մեզ: Մասնակցուներուն իւրաքանչիւրն ունէր Հքեղ
թաւշեայ ժապաւէն մը Հնչակեան կուսակցութեան
նշանով եւ վրան Կիւ-Եօրկի Մասնաճի գ գրուած եւ ա-
մերիկեան փոքրիկ գրօշակներ: Թափորի առջեւեն կը

տանէին ազգային գրօշակ, Ամերիկեան գրօշակ եւ պէ-
նըր վրան զրուած՝ «Armenien Hentchakiste Association New-York Branch», իսկ հայկական գրօշակին
վրայ գրուած էր. «Կեցցէ Հնչակեան կուսակցութիւն: Թափորին ամենէն գլխին պարզուած կա: երկու մեծագիր
յեղափոխական կարմիր գրօշակ: Թափորը տեւեց եր-
կու ժամ, ապա ժողովուեցան սրահը, ուր տանեախօ-
սութիւններ եղան, կարգացուեցան օրուան պատշաճ գը-
րութիւններ, «Հնչակին 1890 ժւեւն յօդուածներ եւ այն: Սցն հանդէսի մասին համակրական նկարագրութիւններ
կային տեղւցս ամերիկեան թերթերու մէջ:»

—Մեզ հաղորդում են նաեւ, որ Ամերիկայի Վուա-
տլը, Պրօվիդանս, Ֆիլադէլֆիա, Բոստոն, Լորէնց եւ այլ
քաղաքներում եւս Հնչակեան կուսակցութեան Մասնա-
ճիւղերը հանդիսաւոր կերպով տօնել են հայ յեղափո-
խական անդրանիկ շարժման, Գումագափուի մեծ 8ոյ-
ցի, տարեղարձը:

ԱՅՀԱՄԵԴՐՈՒԹԵԱՆ ԷՐԹԹԵԱՆ ՄԵՍԻ

ՖԵՐԴԻՆԱՆԴ ԼԱՍՍԱԼԻ.

Թարգմանութիւն.

ՄԵԿ ԱՐԱԶԱԲԱՆՈՎ

«ՀՆՉԱԿԱՆ-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՒ

ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏԿԵՐՈՎ.

Գինը 40 սանտիմ:

ԼՊՅԱ ՏԵՍԱԲ

ԲՐՈՉԵՐԻ ԳԻՐՔ ոՎ

ԻՐԵԿԻՈՒՆԻ ԾՈՒԼԸՆԸԼԱՐ.

ՊՈԼ ԼԱՖԱՐԳԻ

Թարգմանութիւն.

ՀԵՂԻՆԱԿԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՄԵՐ ԵՒ ՊԱՏԿՆԵՐՈՎ:

Գինը 25 սանտիմ.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
թղթագրամ գումարներ ուղարկել հետեւեալ հասկով: —
Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.

ԱՌԵԿԻ.

Հայկական ազատ տպարան.